



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

16.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/12

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2017թ. թիվ 03/73-3/9381-17 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 11.04.2017թ. թիվ 09/481 գրության հիման վրա, 27.05.2017թ. թիվ 03/73-3/9381-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Խաչպար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 30.05.2017թ. գրությամբ հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը 09.03.2017թ. թիվ 1 որոշմամբ հաստատել է Ընթացակարգի հրավերը, որի թիվ 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրում նշվել է «Անիոս» ֆիրմայի արտադրության բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցների անունները, իսկ թիվ 8 չափաբաժնում նշվել է ՌԴ արտադրության «Ժավել Աբսոլյուտ» ախտահանիչ միջոցի անունը, նախատեսելով նաև «կամ համարժեք» բառերը:

«Խաչպար» ՍՊԸ-ն 21.03.2017թ. հայտ է ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու համար:

22.03.2017թ. Ընկերությանը ծանուցվել է Ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու մասին: Ընկերությունը 23.03.2017թ. վերը նշված չափաբաժինների մասով ներկայացրել է հավելված 5-ը և առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

30.03.2017թ. «Խաչպար» ՍՊԸ-ն կրկին ծանուցվել է համապատասխան փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության մասին:

Ընկերությունը 31.03.2017թ. գրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ ծավալի մեծ լինելու պատճառով էլեկտրոնային փոստով է առաքում իր կողմից առաջարկված ախտահանիչ միջոցների կիրառման հրահանգները՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի կողմից, ինչպես նաև ՀՀ ԱՆ մասնագիտական փորձաքննության 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 եզրակացությունները:

«Խաչպար» ՍՊԸ-ն 03.04.2017թ. ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2017թ. թիվ 3 արձանագրությունը, որով Ընկերության հայտը մերժվել է՝ ներկայացված տեխնիկական բնութագրերը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին ոչ համարժեք լինելու պատճառով և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Խաչպար» ՍՊԸ-ն 05.04.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որը 21.04.2017թ. թիվ ԳԲԽ-42/17 որոշմամբ բավարարվել է և դադարեցվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավեր հայտարարելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2017թ. թիվ 1 որոշումը՝ 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ չափաբաժինների մասով:

Ելնելով վերոգրյալից՝ «Խաչպար» ՍՊԸ-ն խորհրդին խնդրել է մերժել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը՝ հիմքերի բացակայության հիմքով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով խորհրդի 02.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

* «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 11.04.2017թ. թիվ 09/481 գրությամբ հայտնել է, որ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով սույն թվականի մարտի 10-ին հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետի համաձայն նիստը կասեցվել է և մասնակցին պատշաճ ծանուցմամբ տրվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեխնիկական բնութագրերը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 125-րդ կետի համաձայն, որակվել են որպես իրականությանը չհամապատասխանող:

Պատվիրատուն 07.06.2017թ. թիվ 09/790 գրությամբ հայտնել է, որ Կարգի 51-րդ կետով սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

* 2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը

ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Պատվիրատուն նշել է, որ ուսումնասիրելով նորմի կրառման անհրաժեշտ գործողությունների բնույթը և ժամկետը, ակնհայտ է, որ մասնակցի կողմից գնման ընթացակարգին կեղծ տեղեկություններ ներկայացնելն ինքնին անհրաժեշտ և բավարար պայման է՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պատճառաբանություններին, որ հետագայում ԵՊԲՀ կողմից տվյալ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած է ճանաչվել, հետևաբար այդ ցուցակում ընդգրկելու համար ԵՊԲՀ պահանջն իրավաչափ չէ, ապա Պատվիրատուն հայտնել է, որ նորմի կիրառման համար օրենսդրի կողմից չի նախատեսվել հետագայում տվյալ չափաբաժնի համար հայտարարված ընթացակարգի հետագա ընթացքը և ճակատագիրը: Կեղծ տվյալներ ներկայացնելու փաստը՝ անկախ չափաբաժնի հետագա հնարավոր հետևանքներից, չի կարող ի չիք դարձնել մասնակցի կողմից կեղծ տվյալ ներկայացնելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը: Այլապես «Խաչպար» ՍՊԸ-ի տրամաբանությամբ շարժվելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել համապատասխան լրացում այն մասին, որ «... գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ, եթե հետագայում այդ չափաբաժնի համար հայտարարված ընթացակարգն անվավեր չի ճանաչվել, Պատվիրատուի կողմից ուժը կորցրած չի ճանաչվել կամ այլ հետևանք չի ունեցել», պետք է նաև «սև ցուցակ» ընդգրկելու համար նախատեսվի բոլորովին նոր՝ այդ բոլոր հետևանքները բացառելուց հետո ներկայացման ժամկետ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/12 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/12 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով թիվ 1-8-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

3. Ընկերությունը հայտի թիվ 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 1, 2, 3, 4, 6, 7, 8 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագիրը համապատասխանում է «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրին:

4. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-7-րդ չափաբաժինների համար ներկայացրել է հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված «Անիոզիմ ԴԴ1 1 խտանյութ 1լ» նյութին համարժեք «Մեզաբակ խտանյութ 1լ», «Հեքսանիոս Գ-Ռ խտանյութ 1լ» նյութին համարժեք «Մեզաբակ խտանյութ 1լ», «Անիոսժել 85 ՆՊՍ 1լ» նյութին համարժեք «Դիասեպտիկ 40 գել 1լ», «Ստերիանիոս 20 խտանյութ 500մլ» նյութին համարժեք «Ստերոքս 2.7 % 5լ», «Սուրֆանիոս խտանյութ 1լ» նյութին համարժեք «Ամիքսան խտանյութ 1լ», «Սուրֆասեյֆ պրեմիում 750մլ» նյութին համարժեք «Բոնսուլար ցողացրիչ 750 մլ», «Անիոսեյֆ Սավոն Դու 1լ» նյութին համարժեք «Դիասոֆտ Բիո 1լ» ախտահանիչ նյութերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն

հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից Ընթացակարգի 1-7-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը համարժեք չեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:

6. «Խաչպար» ՍՊԸ-ն 05.04.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում, վիճարկելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը, մասնավորապես նշելով, որ տեխնիկական բնութագրում նշվել է ախտահանիչ միջոցների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն կոնկրետ այդ ֆիրմային անվանումներով ախտահանիչ միջոցներին, չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ:

7. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. թիվ 42/17 որոշմամբ Ընկերության բողոքը բավարարվել է և դադարեցվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 9-ի թիվ 1 որոշումը՝ հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ չափաբաժինների մասով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2017թ. թիվ 03/73-3/9381-17 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 11.04.2017թ. թիվ 09/481 և 07.06.2017թ. թիվ 09/790 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ենթակետերի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ,

2) գնումների և գնուների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի **միասնական կանոններով, մրցակցային**, թափանցիկ, հրապարակային և **ոչ խտրական հիմունքներով** կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով **մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:**

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն: (...):»:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության **հավասար պայմաններ** ապահովեն՝ հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված **խոչընդոտների առաջացմանը**.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով 1-7-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Ձ/հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր
1	Անիոգին ԴԴ1 խտանյութ 1 և կամ համարժեք	Անիոգին ԴԴ1 խտանյութ 1-ը հեղուկ կամ համարժեք - (էնդոսկոպների մաքրման և բժշկական նշանակության առարկաների (ԲՆԱ) ախտահանման և նախամանրէազերծումային մշակման համար) Բաղադրությունը - Գուանիդին, N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի (օքսիէթիլ) ամոնիումիպրոպիոնատ- 6,3%, պոլիհեքսամեթիլեն բիգուանիդին հիդրոքլորիդ (20% լուծույթիմեջ 4.8%), (ՉԱՄ-5րդ սերնդի), ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, եռէնզիմային կոմպլեքս (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևութային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր: Փաթեթավորումը- 1-ը պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1-ը խտանյութից ստացվում է 0.5% 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը պիտանի է 7 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ նյութի PH-6,0: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամ դրական և գրամ բացասական մարէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) և այլ մանրէների նկատմամբ: Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար՝ 15րոպեի ընթացքում: Վտանգավորության աստիճանը - Ստամոքս ներթափանցելիս և մաշկին քսվելիս պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 4-րդ դասին, որովայնի խոռոչ ընկնելու դեպքում՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին: ISO 9001, ISO 14001 և CE հավաստագրերի առկայություն: ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են: Ցանկալի է ախտահանիչ նյութն ունենա երաշխավորություն՝ համատեղելիության մասին համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից (օր. Օլիմպուս, Կարլ Շտորց, Պենտաքս, Ֆուջի և կամ այլն):

2	Հեքսանիոս Գ+Ռ խտանյութ 1լ կամ համարժեք	Հեքսանիոս Գ+Ռ խտանյութ 1լ կամ համարժեք - (էնդոսկոպների և բժշկական նշանակության առարկաների (ԲՆԱ) ախտահանման, նախամանրէազերծումային մշակման միջոց) Բաղադրությունը - դիդեցիլդիմեթիլամոնիումի կարբոնատ-9.75%, պոլիհեքսամեթիլենթիոբուտանիդ հիդրոքլորիդ (20% լուծույթի մեջ 4.8%), ինչպես նաև գործառնական բաղադրիչներ, կոոզիային հիբիտոր և այլ հավելյալնյութեր: Ախտահանիչ նյութի pH-ը 6,3 - 7,7: Փաթեթավորումը- 1լ պոլիէթիլենային տարա՝ համապատասխան չափիչ բաժակով: 1լ խտանյութից պատրաստվում է 0.5% 200լ աշխատանքային լուծույթ, որը պիտանի է 14 օր, նախատեսված բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամ դրական և գրամ բացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) և այլ մանրէների նկատմամբ: Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների ախտահանման և նախամանրէազերծումային մաքրման համար՝ մշակման տևողությունը՝ մինչև 15 րոպե: Վտանգավորության աստիճանը – Ստամոքս ներթափանցելիս և մաշկին քսվելիս պատկանում է քիչ վնասակար նյութերի 4-րդ դասին, որովայնի խոռոչ ընկնելու դեպքում՝ 5-րդ դասի գործնականում անվնաս նյութերին: ISO 9001, ISO 14001, CE հավաստագրերի առկայություն: ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերը և օգտագործման մեթոդական հրահանգը պարտադիր են: Ցանկալի է ախտահանիչ նյութն ունենա երաշխավորություն՝ համատեղելիության մասին համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից (օր. Օլիմպուս, Կարլ Շտորց, Պենտաքս, Ֆուջի և կամ այլն):
3	Անիոսժել 85 ՆՊՍ 1լ կամ համարժեք	Անիոսժել 85 ՆՊՍ 1լ կամ համարժեք – Մաշկային անտիսեպտիկ, դեզինֆեկտանտ: Բաղադրությունը - էթանոլ 70%, 2.5% իզոպրոպանոլով հատուկ դենատուրանտ -1.74%, ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքստորոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝ օժտված բարձր թափանցելիությամբ): Տոքսիկչէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ և հոտավետ բաղադրիչներ: Ախտահանիչ նյութն օժտված է մանրէասպան ազդեցություն գրամ բացասական և գրամ դրական մանրէների, (այդ թվում՝ ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), սնկերի (ներառյալ Կանդիդացեղի խմորասնկեր), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ) A գրիպի H5N1, H1N1) նկատմամբ: Հակամանրէային երկարացված ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում: Փաթեթավորումը - 1 և ծավալի պոլիէթիլենային տարա:

		Ախտահանիչ նյութի PH-5,5: Տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, Մեկ հիգենիկ մշակումը- 3մլ-30վրկ., Մեկ վիրաբուժական մշակումը -6մլ -90վրկ. : Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում: 1լ նախատեսված է 333 հիգենիկ և 167 վիրաբուժական մշակման համար: ISO 9001, ISO 14001 և CE հավաստագրերի առկայություն: ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են:
4	Ստերանիոս 20% խտանյութ 500 մլ կամ համարժեք	Ստերանիոս 20% խտանյութ 500մլ կամ համարժեք - Բարձր մակարդակի ախտահանող և մանրէ ազերծման նյութ: Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ (20%), հակակոռոզիոն հավելումներ, կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Փաթեթավորումը 0.5 և պոլիէթիլենային տարա: 0,5լ խտանյութից պատրաստվում է 2% 5 և աշխատանքային լուծույթ՝ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը 30 օր է: Ունեն աթեստզուր լուծույթի պիտանելիությունը վերահսկելու համար: Խտանյութը կարելի է ակտիվացնել աշխատանքային լուծույթի անհրաժեշտ քանակով: Ախտահանիչ նյութի PH 5,5-6,5: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման, բարձր մակարդակի ախտահանման, մանրէազերծման և սպորազերծման համար: Ախտահանման տևողությունը մինչև 10 րոպե: Բարձր մակարդակի ախտահանման տևողությունը՝ 10 րոպե: Մանրէազերծման և սպորազերծման տևողությունը՝ 60 րոպե: Վտանգավորության աստիճանը -Ստամոքս և ցնդող բաղադրիչներին հալյացիոն ճանապարհով օրգանիզմներ թափանցելու դեպքում պատկանում է 3-րդ դասի չափավոր վտանգավորության նյութերի շարքին, մաշկին քսվելիս պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 4-րդ դասին: ISO 9001, ISO 14001 և CE հավաստագրերի առկայություն: ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են: Ցանկալի է ախտահանիչ նյութն ունենա երաշխավորություն՝ համատեղելիության մասին համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից (օր. Օլիմպուս, Կարլ Շտորց, Պենտաքս, Ֆուջի և կամ այլն):
5	Սուրֆանիոս խտանյութ 1լ կամ համարժեք	Սուրֆանիոս խտանյութ 1լ կամ համարժեք - մեծ և փոքր մակերեսների ախտահանման և մաքրման միջոց: Բաղադրությունը - դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ- 2,5%, N,N-բիս-(3-ամինոպրոպիլ)դոդեցիլպրոպան 1,3-դիամին -5,1% (ՉԱՄ), ինչպես նաև օժանդակող բաղադրիչներ՝ էթիլենդիամինտետրաքալսաթթու, ոչ իոնաձին մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), կայունացուցիչ, հոտալետ նյութեր և ջուր: Ախտահանիչ չնյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ (ներառյալ՝ տուբերկուլոզի միկոբակտերիաներ), հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, տուլարեմիա, եգիպտեղզ), վիրուսների (ներառյալ՝ պոլիոմելիտ,

		արտաընդերային հեպատիտներ և ՄԻԱՎ-վարակ), A գրիպի H5N1, H1N1), սնկերի (կանդիդա, դերմատոֆիտեր, բորբոսասնկեր) և այլ մանրէների նկատմամբ: Նյութն օժտված է լվացող և հոտակլանիչ ազդեցությամբ: Ախտահանիչնյութի PH-12,3: Փաթեթավորումը- 1 լպոլիէթիլենային տարա՝ համապատասխան չափիչ բաժակով: Ախտահանիչ նյութի հակամանրէային ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում: Ախտահանումը կատարվում է սրբելու, ցողելու և թրջելու եղանակով: Սենքերում սրբելու եղանակով մակերեսների մշակման ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործումը անհրաժեշտ չէ և կարելի է կատարել հիվանդի ներկայությամբ: 1լ խտանյութից պատրաստվում է 0,25% 400 լիտր և 0,5% 200 լաշխատանքային լուծույթ, որը պիտանի է 7 օր: Օգտագործվում է մակերեսների, գույքի, սպիտակեղենի, լաբորատոր սպասքի և այլ պարագաների ախտահանման և մաքրման համար: Վտանգավորության աստիճանը- Ստամոքս ներթափանցելի սպատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 3-րդ դասին, մաշկին քսվելիս և որովայնի խոռոչ ընկնելու դեպքում 4-րդ դասի քիչ վտանգավոր նյութերին: ISO 9001, ISO 14001 և CE հավաստագրերի առկայություն: ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են:
6	Սուրֆասեյֆ Պրեմիում 750 մլ կամ համարժեք	Սուրֆասեյֆ Պրեմիում պատրաստի լուծույթ, 750 մլ ցողացիք կամ համարժեք - փոքր մակերեսների ախտահանման և մաքրման միջոց: Բաղադրությունը - Դիդեցիլդիմեթիլամոնիումիքլորիդ- 0,14%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ- 0,096% և այլ հավելումներ: Ախտահանման էքսպոզիցիան- 3 րոպե: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ՝ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) նկատմամբ և այլ մանրէների նկատմամբ: Հակաբակտերիալ ազդեցությունը՝ 3 րոպե Հակավիրուսային ազդեցությունը՝ 5 րոպե Հակատուբերկուլյոզային ազդեցությունը՝ 15 րոպե Փաթեթավորումը 750մլ ցողացիչ անվտանգության փականով: Ախտահանիչ նյութի PH-5,5-6,5: Նախատեսված է հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (մանկաբարձական ստացիոնարներում, այդ թվում՝ նեոնատոլոգիայի բաժանմունքներում, ատամնաբուժական կաբինետներում, տարբեր լաբորատորիաներում (կլինիկական, մանրէաբանական և այլ), շտապօգնության կայաններում և այլն) փոքրմակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդ թվում՝ կուվեզներ) և այլ մակերեսների ախտահանման և մաքրման համար: Վտանգավորության աստիճանը Ստամոքսներթափանցելի սև

		մաշկին քսվելիս պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 4-րդ դասին, որով այն խոռոչ ընկնելու դեպքում՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին: ISO 9001, ISO 14001 և CE հավաստագրերի առկայություն: ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են:
7	Անիոսեյթ Սավոն Դու 1 Լ կամ համարժեք	Անիոսեյթ Սավոն-Դու 1 Լ կամ համարժեք – Անտիսեպտիկ օճառ: Բաղադրությունը՝ - լվացող բաղադրիչներ լաուրամֆոկարբոքսիլիցինատ, սոդիումլաուրիլսուլֆատ, լինոլեաինաթթվի դիէթիլանոլամիդ, պահպանող բաղադրիչներ՝ բենզիլսպիրտ, նատրիումի բենզոատ, խոնավեցնող բաղադրիչներ՝ գլիցերին, պաշտպանող բաղադրիչներ՝ սուլֆոսուլցինատ և այլ հավելումներ: Չի պարունակում ալերգեն սուբստանցիաներ: Չի պարունակում տրիկլորան: Օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա, ամենօրյա օգտագործման դեպքում չի գրգռում մաշկը: Օգտագործվում է ինչպես ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար, այնպես էլ մարմնի լվացման համար: Օժտված է բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ ազդեցությամբ: Փաթեթավորումը 1 Լ պլիէթիլենային տարա: Տարանդոգավորող պոմպով, պոմպի մեկ սեղմումը 2մլ է: ISO 9001, ISO 14001, CE հավաստագրերի առկայություն:

Ընթացակարգին հայտ ներկայացրած «Խաչպար» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-7-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված «Անիոզիմ ԴԴ1 1 խտանյութ 1լ» նյութին համարժեք «Մեզաբակ խտանյութ 1լ», «Հեքսանիոս Գ-Ռ խտանյութ 1լ» նյութին համարժեք «Մեզաբակ խտանյութ 1լ», «Անիոսժել 85 ՆՊՍ 1լ» նյութին համարժեք «Դիասեպտիկ 40 գել 1լ», «Ստերիանիոս 20 խտանյութ 500մլ» նյութին համարժեք «Ստերոքս 2.7 % 5լ», «Սուրֆանիոս խտանյութ 1լ» նյութին համարժեք «Ամիքսան խտանյութ 1լ», «Սուրֆասեյթ պրեմիում 750մլ» նյութին համարժեք «Բոնսոլար ցողացրիչ 750 մլ», «Անիոսեյթ Սավոն Դու 1լ» նյութին համարժեք «Դիասոֆտ Բիո 1լ» ախտահանիչ նյութերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից Ընթացակարգի 1-7-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը համարժեք չեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ տեխնիկական բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում

մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, իսկ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը պետք է կազմակերպվի պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի հիման վրա:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված «Անիոգիմ ԴԴ1», «Հեքսանիոս Գ+Ռ», «Անիոսթել», «Ստերանիոս», «Սուրֆանիոս», «Սուրֆասեյֆ Պրեմիում», «Անիոսեյֆ Սավոն» ախտահանիչ նյութերի մեթոդական հրահանգների ուսումնասիրությունից երևում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված են ախտահանիչ միջոցների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 1-7-րդ չափաբաժիններում, վերը նշված ձևով կոնկրետ տվյալներ սահմանելով, խախտել է Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման առարկայի բնութագրերը կազմելու պահանջները, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, քանի որ ախտահանիչ միջոցների հստակ հատկանիշների մատնանշումը հանգեցրել է համարժեք ապրանքը ներկայացնելու մասնակիցների հնարավորության սահմանափակման: Մինչդեռ գնման գործընթացը պետք է կազմակերպվի մրցակցային, ոչ խտրական հիմունքներով և ապահովվի մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության առկայությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2017թ. թիվ 03/73-3/9381-17 գրությամբ ներկայացված «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընթացակարգի

հրավերի տեխնիկական բնութագիրն ի սկզբանե կազմված է եղել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին անհամապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2017թ. թիվ 03/73-3/9381-17 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00071045) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ